

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) միջազգային իրավական համագործակցության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումն է:
2. Վարչության կանոնադրությունը հաստատում է Արդարադատության նախարարը (այսուհետ՝ նախարար):
3. Վարչությունը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, նախարարության և սույն կանոնադրությունների հիման վրա:
4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են վարչության պետը, վարչության պետի տեղակալը և վարչության բաժինները:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության նպատակներն են՝
 - 1) նախարարությանը վերապահված ոլորտներում օտարերկրյա պետությունների, ինտեգրացիոն միավորումների, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը.
 - 2) մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավական հիմքերի զարգացումը.
 - 3) «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նախարարությանը վերապահված գործառույթների իրականացումը:
6. Վարչության խնդիրներն են՝
 - 1) օտարերկրյա պետությունների, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ իրավական համագործակցության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ինտեգրացիոն գործընթացների իրավական ապահովումը.
 - 2) մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական մեխանիզմների, այդ թվում նաև ռազմավարական փաստաթղթերի շարունակական կատարելագործումը.
 - 3) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև իրավական համագործակցության շրջանակներն ընդլայնելու նպատակով Հայաստանի Հանրապետության նոր միջազգային պայմանագրերի կնքումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների ու նախարարության միջև համագործակցության ապահովում, գործընկերային կապի ամրապնդում և այդ նպատակով անհրաժեշտ հանդիպումների, քննարկումների և հաղորդակցության կազմակերպում.

2) նախարարության իրավասության ոլորտում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հետ համագործակցության հիմնական ուղենիշների մշակման և դրա իրականացման աշխատանքների ապահովում.

3) նախարարության իրավասությանն առնչվող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների ապահովում.

4) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման, հաստատման, փոփոխման հետ կապված՝ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով նախարարության իրավասությանը վերապահված աշխատանքների իրականացում.

5) մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության, դրանից բխող գործողությունների ծրագրի (ԳԾ) մշակման աշխատանքների իրականացում, ԳԾ-ով սահմանված միջոցառումների կատարման համակարգում, ԳԾ համակարգող խորհրդի աշխատանքների և հանրային քննարկումների կազմակերպում.

6) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից ստացված՝ նախարարության իրավասությանն առնչվող հարցաշարերի լրացման և պահանջվող տեղեկատվության մշակման և տրամադրման աշխատանքների իրականացում.

7) նախարարի, գլխավոր քարտուղարի, նախարարի տեղակալների և նախարարի կամ գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ նախարարության այլ ներկայացուցիչների և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների միջև հանդիպումների, ընդունելությունների կազմակերպում.

8) նախարարի, գլխավոր քարտուղարի, նախարարի տեղակալների և նախարարի կամ գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ նախարարության այլ ներկայացուցիչների գործուղումների կազմակերպում.

9) ԵՄ Թայեքս և Թվիննինգ գործիքների շրջանակներում համապատասխան աշխատանքների համակարգում:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Վարչության իրավասություններն են՝

1) նախարարությանը վերապահված ոլորտներում օտարերկրյա պետությունների, ինտեգրացիոն միավորումների, միջազգային և տարածաշրջանային

կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակի սահմանումը և քաղաքականության մշակումը.

2) մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի մշակումը և մշտադիտարկումը.

3) միջազգային պայմանագրերի և դրանց առնչվող այլ փաստաթղթերի վերաբերյալ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով նախարարությանը վերապահված գործառույթների իրականացումը:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԲԱԺԻՆՆԵՐԸ

9. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են՝

1) արտաքին կապերի բաժինը.

2) միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժինը:

10. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

6. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Արտաքին կապերի բաժնի գործառույթներն են՝

1) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների ու նախարարության միջև համագործակցության ապահովում, գործընկերային կապի ամրապնդում և այդ նպատակով անհրաժեշտ հանդիպումների, քննարկումների և հաղորդակցության կազմակերպումը.

2) նախարարության իրավասության ոլորտում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հետ համագործակցության հիմնական ուղենիշների մշակման և դրա իրականացման աշխատանքների ապահովումը.

3) նախարարության իրավասությանն առնչվող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների ապահովումը.

4) մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության, դրանից բխող գործողությունների ծրագրի (ԳԾ) մշակման աշխատանքների իրականացում, ԳԾ-ով սահմանված միջոցառումների կատարման համակարգում, ԳԾ համակարգող խորհրդի աշխատանքների և հանրային քննարկումների կազմակերպումը.

5) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից ստացված՝ նախարարության իրավասությանն առնչվող հարցաշարերի լրացման և պահանջվող տեղեկատվության մշակման և տրամադրման աշխատանքների իրականացումը.

6) նախարարի, գլխավոր քարտուղարի, նախարարի տեղակալների և նախարարի կամ գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ նախարարության այլ ներկայացուցիչների և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների միջև հանդիպումների, ընդունելությունների կազմակերպումը.

7) նախարարի, գլխավոր քարտուղարի, նախարարի տեղակալների և նախարարի կամ գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ նախարարության այլ ներկայացուցիչների գործուղումների կազմակերպումը.

8) ԵՄ Թայքս և Թվիննինգ գործիքների շրջանակներում համապատասխան աշխատանքների համակարգումը:

12. Միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժնի գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման, հաստատման, փոփոխման հետ կապված՝ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով նախարարության իրավասությանը վերապահված աշխատանքների իրականացումը.

2) ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ միջազգային կազմակերպությունների անդամակցությունից բխող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշումների, կարծիքների և պահանջվող այլ տեղեկատվության ներկայացման աշխատանքների ղեկավարում, ինչպես նաև ԵԱՏՄ և երրորդ կողմի պետությունների հետ ազատ առևտրի շրջանակներում պայմանագրերի նախագծերի, ԵԱՏՄ իրավունքի մաս կազմող միջազգային փաստաթղթերի վերաբերյալ դիրքորոշումների կազմման աշխատանքների իրականացումը.

3) ԵԱՏՄ դատարանում Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու և իրավական դիրքորոշումներ դատարան ներկայացնելու աշխատանքների համակարգումը.

4) Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, գերատեսչությունների կողմից ստացված՝ նախարարության իրավասությանն առնչվող հարցաշարերի լրացման և պահանջվող տեղեկատվության մշակման և տրամադրման աշխատանքների կազմակերպումը:

7. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Նախարարը ղեկավարում է նախարարության գործունեությունը:

14. Վարչության գործունեությունը համակարգում է նախարարի համապատասխան տեղակալը՝ իր համակարգման լիազորությունների շրջանակներում:

15. Վարչությունը գործում է վարչության պետի անմիջական ղեկավարությամբ:

16. Վարչության պետն անմիջական հաշվետու է նախարարին և նախարարի համապատասխան տեղակալին:

17. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է նախարարը կամ նախարարի համապատասխան տեղակալը:

18. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը վարչության պետը կարող է ստորագրել անմիջական ղեկավարի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ: